



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0026, ք.Երևան, Գ.Նժդեհի 23, հեռ. 44-88-94, էլ.փոստ.criminalcourt@armenico.com

Գործ. հ. ԿԴ/0078/01/10

17 հունվարի 2011թ.

ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎԱՀԱՉՈՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝
ԱՐՏԱԿ ՉԵՅՆԱԼՅԱՆԻՆ
/ք. Երևան, Հանրապետության փող. 78 շ., բն. 19/

2011թ. փետրվարի 03-ին, ժամը 12.00-ին վերաքննիչ քրեական դատարանը մեղադրողների, ամբաստանյալների, պաշտպանի և Ձեր վերաքննիչ բողոքների հիման վրա քննության է առնելու քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Աշոտ Հարությունի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով, Մորես Արծրունու Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, Գարիկ Արամի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և Գագիկ Վլադիմիրի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Խնդրվում է նշված օրը և ժամին ներկայանալ դատական նիստին:

Կից՝ ուղարկվում է նաև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԲՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հունվարի 2011թ.

ք.Երևան

ՀՀ ԲՐԵԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա. Հովհաննիսյան
Ե. Դարբինյան
Ս. Չիչոյան

Ուսումնասիրելով ամբաստանյալներ՝ Աշոտ Հարությունի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով, Մորեն Արծրունու Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, Գարիկ Արամի Դավթյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և Գագիկ Վլադիմիրի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով 2010թ. նոյեմբերի 29-ի դատավճռի դեմ բերված մեղադրողների, ամբաստանյալների, պաշտպանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքները վարույթ ընդունելու հարցը

Պ Ա Ր Զ Ե Յ

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2010 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով ամբաստանյալ Աշոտ Հարությունի Հարությունյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտել ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով 2 /երկու/ տարի ժամկետով:

Պատժի կրման սկիզբը հաշվելով 2010թվականի ապրիլի 26-ից:

Ամբաստանյալ Աշոտ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանքը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Մորեն Արծրունու Հայրապետյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով: Նշված ժամկետում հաշվակցել է նրա՝ 21.04.2010թ.-ից մինչև 21.05.2010թ.-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը և վերջնական պատիժ նշանակել՝ ազատազրկում 1 /մեկ/ տարի 11 /տասնմեկ/ ամիս ժամկետով:

Կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով:

Ամբաստանյալ Մորեն Հայրապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին թողնվել է անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Ամբաստանյալ Գարիկ Արամի Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ ճանաչել է անմեղ և արդարացրել:

Ամբաստանյալ Գարիկ Դավթյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին՝ վերացվել է:

Ամբաստանյալ Գագիկ Վլադիմիրի Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ ճանաչել է անմեղ և արդարացրել:

Ամբաստանյալ Գագիկ Վլադիմիրի Ղազարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, վերացվել է:

Վճռվել է նաև գործով իրենին ապացույց ճանաչված խոհանոցային դանակը, արնաման հետքերով բամբակյա խժուժները և տուժող Վահան Խալաֆյանի հազուատները՝ ոչնչացնել, իսկ ապացույց ճանաչված տեսանիշը, լազերային սկավառակը ինչպես նաև դատարանում հետազոտված մյուս փաստաթղթերն ու ապացույցները՝ պահել քրեական գործի հետ միասին:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2010թ. դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել մեղադրողներ Հ.Հարությունյանը, Կ.Փիլոյանը, ամբաստանյալ Ա.Հարությունյանը և վերջինիս պաշտպան Ս.Սաֆարյանը, ամբաստանյալ Մ.Հայրապետյանը և տուժողի իրավահաջորդ Հ.Խալաֆյանի ներկայացուցիչ Ա.Ջնյալյանը:

Մեղադրողներ Հ.Հարությունյանը և Կ.Փիլոյանը խնդրել են Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010թ. նոյեմբերի 29-ի դատավճիռը՝ Գարիկ Արամի Դավթյանին և Գագիկ Վլադիմիրի Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու մասով բեկանել և այդ մասով ևս կայացնել մեղադրական դատավճիռ:

Ամբաստանյալ Մ.Հայրապետյանը խնդրել է բեկանել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2010թ. դատավճիռը իր պատժի մասով և իր նկատմամբ կիրառել ՀՀ քր. օր-ի 72-րդ հոդվածի պահանջները:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ջնյալյանը խնդրել է բեկանել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2010թ. դատավճիռը և այն փոփոխել՝ Աշոտ Հարությունի Հարությունյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, Մորես Արծրունու Հայրապետյանի նկատմամբ ազատագրվման ձևով ընտրված պատիժը կիրառել, Գարիկ Արամի Դավթյանին և Գագիկ Վլադիմիրի Ղազարյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր. օր-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով և նրանց նկատմամբ պատիժ նշանակել ազատագրվման ձևով:

Ամբաստանյալ Ա.Հարությունյանը և պաշտպան Ս.Սաֆարյանը խնդրել են բեկանել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2010թ. դատավճիռը Աշոտ Հարությունյանի մասով և գործն ուղարկել նույն դատարան այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

ՀՀ քր. դատ. օր-ի 385 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատական նիստ նշանակելու որոշման մեջ պետք է լուծվեն հետևյալ հարցերը՝ գործի քննությունն սկսելու ժամանակը և տեղը, ելնելով դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը պատշաճ կերպով ստուգելու անհրաժեշտությունից՝ դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, դատական նիստին կանչվող վկաները, փորձագետը և այլ անձիք, եթե դա անհրաժեշտ է, ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցը պահպանելը, փոխելը կամ վերացնելը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում գործը դռնփակ դատական նիստում քննելու անհրաժեշտությունը»:

ՀՀ քր. դատ. օր-ի 390 հոդվածի 1-ին մասում նշված է, որ Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով:

Վերաքննիչ բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ բողոքում քրեական գործում առկա ապացույցները ՀՀ քր. դատ. օր-ի 391 հոդվածի 4-րդ մասի կարգով հրապարակելու և հետազոտելու, ինչպես նաև ՀՀ քր. դատ. օր-ի 382 հոդվածի 3-րդ մասով սահմանված նոր նյութեր ներկայացնելու վերաբերյալ միջնորդություններ չեն ներկայացվել:

